

1.2.4. Տրանսպորտ

Ավտոմոբիլային տրանսպորտ

Բեռնափոխադրումներ: 2009թ. ըստ տնտեսավարող սուբյեկտներից ստացված վիճակագրական հաշվետվությունների տվյալների և չհաշվառվող դաշտի լրահաշվարկի, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը կազմել է 490.7 հազ. տոննա, որը 2008թ. նկատմամբ աճել է 27.0 տոկոսով:

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը ըստ ԼՂՀ շրջանների

	2008թ. հազ.տոննա	2009թ. հազ.տոննա	2009թ. 2008թ. նկատմամբ.տոկոսներով
Ընդամենը	386.3	490.7	127.0
ք.Ստեփանակերտ	186.6	251.0	134.5
Ասկերան	35.6	36.7	103.1
Հադրութ	28.3	28.6	101.1
Մարտակերտ	41.2	56.8	137.9
Մարտունի	48.7	57.7	118.5
Շահումյան	6.1	7.1	116.4
Շուշի	14.2	21.6	152.1
Քաշաթաղ	25.6	31.2	121.9

Բեռնաշրջանառություն: Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառությունը 2009թ. կազմել է 25326.7 հազ. տոննա-կմ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 30.3 տոկոսով:

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը ըստ ԼՂՀ շրջանների


	2008թ. հազ.տոննա-կմ	2009թ. հազ.տոննա-կմ	2009թ. 2008թ. նկատմամբ.տոկոսներով
Ընդամենը	19431.5	25326.7	130.3
ք.Ստեփանակերտ	8918.4	13838.4	155.2
Ասկերան	1873.3	1875.0	100.1
Հադրութ	1489.2	1500.5	100.8
Մարտակերտ	2468.0	2706.9	109.7
Մարտունի	2262.6	2632.1	116.3
Շահումյան	321.0	382.6	119.2
Շուշի	752.0	949.5	126.3
Քաշաթաղ	1347.0	1441.7	107.0

Ուղևորափոխադրումներ: 2009թ. հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը կազմել է 17288.5 հազ. մարդ` նախորդ տարվա 14531.2 հազ. մարդու դիմաց:

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը ըստ ԼՂՀ շրջանների

	2008թ. հազ.մարդ	2009թ. հազ.մարդ	2009թ. 2008թ. նկատմամբ.տոկոսներով
Ընդամենը	14531.2	17288.5	119.0
ք.Ստեփանակերտ	12961.8	15219.4	117.4
Ասկերան	726.4	1030.7	141.9
Հադրութ	98.9	131.2	132.7
Մարտակերտ	132.0	184.5	139.8
Մարտունի	127.5	189.5	148.6
Շահումյան	0.8	1.9	237.5
Շուշի	473.2	517.2	109.3
Քաշաթաղ	10.6	14.1	133.0

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալի կառուցվածքն ըստ ԼՂՀ շրջանների



Ուղևորաշրջանառություն: Ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառությունը 2009թ. կազմել է 127055.5 հազ. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 28.6 տոկոսով:


Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը ըստ շրջանների

	2008թ. հազ.մարդ-կմ	2009թ. հազ.մարդ-կմ	2009թ. 2008թ. նկատմամբ տոկոսներով
Ընդամենը	98788.9	127055.5	128.6
ք.Ստեփանակերտ	73425.5	101143.4	137.7
Ասկերան	7867.3	7980.0	101.4
Հաղրուք	5043.9	5101.8	101.1
Մարտակերտ	3701.7	3745.8	101.2
Մարտունի	4804.0	5026.2	104.6
Շահումյան	106.0	110.0	103.8
Շուշի	2232.9	2299.4	103.0
Քաշաթաղ	1607.6	1648.9	102.6

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով տնտեսավարող սուբյեկտների կողմից մատուցված ծառայությունների ծավալներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2009թ.

	Տնտեսավարող սուբյեկտ-ների քանակը, միավոր	Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ	Մատուցված ծառայությունների ծավալը, հազ. դրամ	Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ
Ընդամենը ԼՂՀ	187	100.0	791.0	100.0	1107.7	100.0
մինչև 5 մարդ(գերփոքր)	152	81.3	196.0	24.8	254.4	23.0
6-15մարդ (փոքր)	24	12.8	245.0	31.0	413.4	37.3
16-30մարդ(միջին)	7	3.8	147.0	18.5	230.8	20.8
31և ավելի մարդ (խոշոր)	4	2.1	203.0	25.7	209.1	18.9

Մատուցված ծառայությունների ծավալների կառուցվածքն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2009թ.



Խողովակային տրանսպորտ: 2009թ. խողովակային տրանսպորտով հանրապետությունում ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը կազմել է 25591.3 տոննա՝ 2008թ. 23552.8 տոննայի դիմաց:

Ճանապարհատրանսպորտային պատահարներ: Հանրապետությունում 2009թ., ըստ ԼՂՀ կառավարությանն առընթեր ԼՂՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության տվյալների, արձանագրվել է շարժակազմի հետ կապված ճանապարհատրանսպորտային պատահարների 51 դեպք, ինչը նախորդ տարվա համեմատ նվազել է 1.9 տոկոսով:

Արձանագրված բոլոր ճանապարհատրանսպորտային պատահարներից 42-ը տեղի են ունեցել տրանսպորտային միջոցների վարորդների կողմից՝ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման պատճառով:

Ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով 2009թ. վիրավորվել է 64 և զոհվել՝ 6 մարդ:

Ճանապարհատրանսպորտային պատահարների և տուժվածների թիվը 2009թ.


	Պատահարների քանակը, միավոր		Տուժվել են, մարդ			
	Ընդամենը	այդ թվում՝ հարբած վիճակում գտնվող վարորդների պատճառով	զոհվել են		վիրավորվել են	
			Ընդամենը	այդ թվում՝ հարբած վիճակում գտնվող վարորդների պատճառով	Ընդամենը	այդ թվում՝ հարբած վիճակում գտնվող վարորդների պատճառով
Ընդամենը պատահարներ այդ թվում՝ ըստ տեսակների	51	-	6	-	64	-
Բեռնատար ավտոմեքենաներ	8	-	3	-	12	-
Թեթև մարդատար մեքենաներ	40	-	3	-	49	-
Մոտոցիկլետներ և այլ	3	-	-	-	3	-

Ճանապարհատրանսպորտային պատահարների մեծամասնությունը տեղի է ունեցել Ստեփանակերտ քաղաքում՝ 39.2 տոկոսը կամ 20պատահար, որոնց հետևանքով զոհվել է 1 վիրավորվել՝ 22 մարդ:

Ճանապարհատրանսպորտային պատահարները 2008-2009թթ. ըստ շրջանների

	Պատահարների քանակը, միավոր	2008թ.		2009թ.		
		Տուժվել են, մարդ		Պատահարների քանակը, միավոր	Տուժվել են, մարդ	
		զոհվել են	վիրավորվել են		զոհվել են	վիրավորվել են
Ընդամենը	52	17	69	51	6	64
ք.Ստեփանակերտ	22	2	25	20	1	22
Ասկերան	11	12	20	11	1	19
Հաղրուք	4	1	3	3	1	3
Մարտակերտ	5	-	6	3	-	3
Մարտունի	1	-	1	4	-	4
Շահումյան	1	1	1	1	-	1
Շուշի	4	-	9	5	3	7
Քաշաթաղ	4	1	4	4	-	5

Ճանապարհատրանսպորտային պատահարները 2008-2009թթ. ըստ շրջանների



Ճանապարհատրանսպորտային պատահարները և տուժվածներն ըստ պատահարի վայրի և տեսակի 2009թ.

ըստ կատարված պատահարի վայրի	Պատահարների քանակը, միավոր	Տուժվել են, մարդ	
		գոհվել են	վիրավորվել են
Քաղաքներում և բնակավայրերում	23	1	26
Ավտոճանապարհներին	24	5	34
Այլ տեղերում	4	-	4
Բախում	10	2	14
Շրջում	18	4	25
Խոչընդոտի վրաերթ	7	-	9
Կանգնած տրանսպորտային միջոցի վրաերթ	-	-	-
Հետիոտնի վրաերթ	16	-	16
Հեծանվորդի վրաերթ	-	-	-